# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ՎԿԱՅԱԿԱՆ

## *ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ*

Սույն վկայականով հաստատվում է «14» Հունվարի 2014 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

### *1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ (ՆԵՐ)*

Հայաստանի Հանրապետության Առողջապահության նախարարություն ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ

### *2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ*

Մարզ Արմավիր, համայնք Արմավիր ք. Սայաթ-Նովա փողոց թիվ 122 վարչական շենք

### *3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ*

Վարձակալության պայմանագիր 28/12/2013թ. Ս/Մ 6014

### *4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ*

Կադաստրային ծածկագիրը՝

Մակերեսի չափը (հա)՝

Նպատակային նշանակությունը՝

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝

Գրանցված իրավունքի տեսակը՝

## 5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ Արտադրական

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

| Հ/հ | Կադաստրային ծածկագիրը | Տեսակը | Մակերեսի չափը | Գրանցված իրավունքի տեսակը |
|---|---|---|---|---|
| 1 | **04-001-0052-0011-001-000** | **Վարչական շենք** | **222 ք.մ.** | **ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ** |

### *Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ*

Վարձակալությամբ է տրված վարչական շենքի 2-րդ հարկի սեփ. վկայականի հատակագծի մեջ նշված թիվ 5, 6, 7, 8,, 9, 17, 18, 19, 20, 21, 22, 23 և 24 տարածքները:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Հերմինե Գրիգորյան

զբաղեցրած պաշտոնը՝ Արմավիր ՏՍ անշարժ գույքի ռեգիստր

ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի՝ վկայականը տրամադրող ստորաբաժանման գրասենյակի

Կ.Տ.

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

---

Երկու հազար տասներեք թվականի դեկտեմբերի քսանյոթին
քաղ.Արմավիր

«ՊՐՈԳՐԵՍ» Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերությունը, իրավաբանական հասցեն, ք. Արմավիր, Սայաթ-Նովա փող.122, ի դեմս ՍՊԸ տնօրեն՝ Կոլյա Մալիքյանի Գալստյանի /անձնագիր AF0265271, տրված 15.03.2001թ. /վավերականության ժամկետը երկարաձգված է մինչև 15.03.2016թ./ 048-ի կողմից, հաշվառված ք. Արմավիր, Շահումյանի փող. 14 շենք, 15 բնակարան հասցեում./, այսուհետ „ՎԱՐՁԱՏՈՒ„ և « ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ » , իրավաբանական հասցեն՝ ք. Երևան, Կառավարական տուն 3, ի դեմս աշխատակազմի ղեկավար՝ Սուրեն Քրմոյանի, 25.12.2013 թ. վավերացված ՍՔ/ԳՆ/14307-13 լիազորագրով գործում է Արտակ Հայկի Հովսեփյանը /անձնագիր AM0769265, տրված 13.06.2012 թ. 048-ի կողմից, հաշվառված Արմավիրի մարզ, գ. Հայկավան, 21-րդ փող., 3 տուն հասցեում./, այսուհետ „ՎԱՐՁԱԿԱԼ„ կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով Վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց Վարձակալի տիրապետմանը և օգտագործմանը հանձնել ՀՀ ք. Արմավիր, Սայաթ -Նովա փող. 122 հասցեում գտնվող վարչական շենքի 2-րդ հարկի ըստ սեփականության վկայականի հատակագծի թիվ 5 տարածքը՝ 13,8 /տասներեք ամբողջ ութ տասնորդական/ քմ մակերեսով, թիվ 6 տարածքը 13,8/տասներեք ամբողջ ութ տասնորդական/ քմ մակերեսով, թիվ 7 տարածքը 28 /քսանութ/ քմ մակերեսով, թիվ 8 տարածքը՝ 13,8 /տասներեք ամբողջ ութ տասնորդական/ քմ մակերեսով, թիվ 9 տարածքը՝ 13,8 /տասներեք ամբողջ ութ տասնորդական/ քմ մակերեսով, թիվ 17 տարածքը՝ 13,8 /տասներեք ամբողջ ութ տասնորդական/ քմ մակերեսով, թիվ 18 տարածքը 13,8 /տասներեք ամբողջ ութ տասնորդական/ քմ մակերեսով, թիվ 19 տարածքը՝ 13,8 /տասներեք ամբողջ ութ տասնորդական/ քմ մակերեսով, թիվ 20 տարածքը՝ 13,8/ տասներեք ամբողջ ութ տասնորդական/ քմ մակերեսով, թիվ 21 տարածքը՝ 13,8 /տասներեք ամբողջ ութ տասնորդական/ քմ մակերեսով, թիվ 22 տարածքը՝ 13,8 /տասներեք ամբողջ ութ տասնորդական/ քմ մակերեսով, թիվ 23 տարածքը՝ 28 /քսանութ /քմ մակերեսով և թիվ 24 տարածքը՝ 28 /քսանութ /քմ մակերեսով , այսուհետ «Գույք» :

1.2. Գույքը տրամադրվում է որպես գրասենյակ օգտագործելու համար :

1.3. Վարձատուն վարձակալության հանձնված Գույքի սեփականատերն է համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանման կողմից 01 դեկտեմբերի 2006 թ. տրված թիվ 1986785 սեփականության իրավունքի վկայականի հիման վրա:

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Ծածկագրերը համապատասխանեցված են գործող կարգին: Հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցված է 04.10.2005 թ. թիվ 199-Ն ՀՀ օրենքի 23 հոդվածի պահանջների համաձայն պայմանով՝ գույքի հետագա օտարման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումը կկատարվի վճարման պահին հողամասի կադաստրային արժեքի վճարման անդորրագիրը ներկայացնելու դեպքում :

1.4.. Վարձատուն երաշխավորում է, որ գույքը վաճառված, գրավ դրված չէ, կալանքի և արգելանքի տակ չի գտնվում, համաձայն 25 դեկտեմբերի 2013թ. ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանման կողմից տրված թիվ US-25122013-04-0040 տեղեկանքի:

1.5.Վարձակալության հանձնված Գույքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն այլ անձի հիմք չէ սույն պայմանագիրը լուծելու կամ փոխելու համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1.ՎԱՋԱՏՈՒՆ իրավունք ունի՝

2.1.1.ՎԱՐՁԱԿԱԼԻՑ պահանջել գույքն օգտագործելու սույն պայմանագրի պայմաններին և Գույքի նշանակությանը համապատասխան.

2.1.2. ՎԱՐՁԱԿԱԼԻ կողմից վարձը վճարելու ժամկետների էական խախտման դեպքում նրանից պահանջել վաղաժամկետ մուծելու վարձավճարը.

2.1.3.Պահանջել լուծելու պայմանագիրը և հատուցելու վնասները, եթե ՎԱՐՁԱԿԱԼԸ Գույքից օգտվում է պայմանագրի պայմաններին կամ Գույքի նշանակությանն անհամապատասխան.

2.1.4. Վարձակալն իրավունք ունի գույքը ենթավարձակալության տալ Վարձատուի համաձայնությամբ:

2.2.ՎԱՐՁԱՏՈՒՆ ՊԱՐՏԱՎՈՐ Է՝

2.2.1.Գույքը ՎԱՐՁԱԿԱԼԻՆ տրամադրել սույն պայմանագրի պայմաններին և Գույքի նշանակությանը համապատասխան վիճակում.

2.2.2. Գույքը ՎԱՐՁԱԿԱԼԻՆ հանձնել դրա բոլոր պատկանելիքներով ու դրան վերաբերող փաստաթղթերով (տեխնիկական անձնագիր,որակի հավաստագիր և այլն).

2.2.3.Իր հաշվին կատարել Գույքի հիմնական վերանորոգումը և կոմունալ ծախսերը:
2.2.4.ՎԱՐՁԱԿԱԼԻՆ նախազգուշացնել Գույքի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների (գրավ, իրավունք,սերվիտուտ և այլն) մասին.
2.2.5.Վարձակալի պահանջի դեպքում անհապաղ վերացնել Գույքի թերությունները կամ իջեցնել վարձավճարը:
2.3.ՎԱՐՁԱԿԱԼՆ իրավունք ունի՝
2.3.1.Պահանջել ՎԱՐՁԱՏՈՒԻՑ սույն պայմանագրի 1.4. կետում սահմանված ժամկետում իրեն տրամադրել Գույքը.
2.3.2. ՎԱՐՁԱՏՈՒԻՑ պահանջել իրեն տրամադրել Գույքի պատկանելիքներն ու դրան վերաբերող փաստաթղթերը.
2.3.3. Գույքի օգտագործմանն ամբողջովին կամ մասնակիորեն խոչընդոտող թերություններ հայտնաբերելիս, իր ընտրությամբ՝
2.3.3.1.ՎԱՐՁԱՏՈՒԻՑ պահանջել անհապաղ վերացնելու Գույքի թերությունները կամ համաչափ իջեցնելու վարձավճարը կամ հատուցելու Գույքի թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերը.
2.3.3.2.ՎԱՐՁԱՏՈՒԻՆ նախապես տեղեկացնելով՝վարձավճարից պահել տվյալ թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերի գումարը.
2.3.3.3.Պահանջել լուծելու պայմանագիրը.
2.3.4.Պահանջել նվազեցնելու վարձավճարի չափը,եթե հանգամանքների ուժով, որոնց համար ինքը պատասխանատվություն չի կրում, Գույքի վիճակը վատթարացել է.
2.3.4.ՎԱՐՁԱՏՈՒԻ կողմից սույն պայմանագրի 2.2.3. կետում նշված պարտականությունը չկատարելու դեպքում:
2.3.5..Կատարել սույն պայմանագրով նախատեսված կամ անհետաձգելի անհրաժեշտությամբ ծագած հիմնական վերանորոգումը և ՎԱՐՁԱՏՈՒԻՑ պահանջել վերանորոգման արժեքը կամ դա հաշվարկել վարձավճարի հաշվին.
2.3.6.Պահանջել համապատասխան չափով նվազեցնելու վարձավճարը.
2.4. ՎԱՐՁԱԿԱԼԸ պարտավոր է՝
2.4.1. Ժամանակին մուծել Գույքն օգտագործելու համար սույն պայմանագրի 3 կետում նախատեսված վճարը (վարձավճարը).
2.4.2.Գույքը պահպանել պատշաճ վիճակում :
2.4.3.Պայմանագիրը դադարելու դեպքում ՎԱՐՁԱՏՈՒԻՆ վերադարձնել Գույքն իր կողմից ստացած վիճակում՝ հաշվի առնելով դրա բնականոն մաշվածությունը.
2.4.4. Իր հաշվին կատարել գույքի ընթացիկ վերանորոգումը:

3.ՀԱՇՎԱՐԿՆԵՐԸ

3.1.Վարձավճարի չափը կազմում է ամսեկան 90 000/իննսուն հազար /ՀՀ դրամ, ներառյալ հարկերը:
3.2.Սույն պայմանագրի կնքման հետ կապված ծախսերի համար վճարում է Վարձակալը:
3.3. Կողմերի փոխադարձ համաձայնությամբ նշված տարածքի բոլոր տեսակի կոմունալ վճարները կատարվելու է Վարձակալի կողմից :

## 4..ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1.Եթե ՎԱՐՁԱԿԱԼԸ պայմանագիրը դադարելուց հետո չի վերադարձրել Գույքը կամ այն վերադարձրել է ժամկետի խախտմամբ, ապա ՎԱՐՁԱՏՈՒՆ իրավունք ունի վարձավճար պահանջել կետանցի ամբողջ ժամանակահատվածի
համար:Եթե նման վճարը լրիվին չի մարում ՎԱՐՁԱՏՈՒԻՆ պատճառված վնասները, նա կարող է պահանջել հատուցելու դրանց մնացած մասը:
4.2.ՎԱՐՁԱՏՈՒՆ պատասխանատվություն չի կրում Գույքի այն թերությունների համար որոնք նա նշել է սույն պայմանագիրը կնքելիս, կամ որոնք նախապես հայտնի են եղել ՎԱՐՁԱԿԱԼԻՆ կամ պետք է ՎԱՐՁԱԿԱԼԻ կողմից հայտնաբերվեին Գույքը զննելիս կամ Գույքը վարձակալության հանձնելիս դրա սարքինությունը ստուգելիս:
4.3.Վարձակալը պարտավորվում է վճարել էլեկտրոէներգիայի և հեռախոսի վարձերը :

## 5.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

5.1 Սույն պայմանագիրը կնքվում է 3/երեք /տարի ժամանակով և ուժի մեջ է մտնում 10.01.2014 թ..

## 6 .ՎԱՐՁԱԿԱԼԱԾ ԳՈՒՅՔԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄՆԵՐԸ

6.1.Վարձակալած գույքից ՎԱՐՁԱԿԱԼԻ կատարած բաժանելի բարելավումները համարվում են նրա սեփականությունը:
6.2.Եթե ՎԱՐՁԱԿԱԼՆ իր միջոցների հաշվին և ՎԱՐՁԱՏՈՒԻ համաձայնությամբ կատարել է վարձակալած Գույքից անբաժանելի բարելավումներ՝առանց դրան վնաս պատճառելու, ապա սույն պայմանագիրը դադարելուց հետո ՎԱՐՁԱԿԱԼՆ իրավունք ունի հատուցում ստանալու այդ բարելավումների արժեքի չափով:
6.3.ՎԱՐՁԱԿԱԼԻ կողմից առանց ՎԱՐՁԱՏՈՒԻ համաձայնության կատարված վարձակալած Գույքից անբաժանելի բարելավումների արժեքը չի հատուցվում:
6.4.Վարձակալած գույքի ամորտիզացիոն միջոցների հաշվին կատարած, ինչպես բաժանելի, այնպես էլ

իրաժանելի բարելավումները համարվում են ՎԱՐՁԱՏՈՒԻ սեփականություն

## 7.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

7.1.ՎԱՐՁԱՏՈՒԻ պահանջով վարձակալության պայմանագիրը կարող է դատարանով վաղաժամկետ լուծվել, եթե ՎԱՐՁԱԿԱԼԸ՝

7.1.1.Գույքն օգտագործել է սույն պայմանագրի պայմանների կամ Գույքի նշանակության էական կամ բազմակի խախտումներով.

7.1.2.Էականորեն վատթարացել է Գույքի վիճակը.

7.1.3.Սույն պայմանագրով սահմանված ժամկետներում չի կատարել Գույքի ընթացիկ վերանորոգումը:

7.2.ՎԱՐՁԱԿԱԼԻ պահանջով սույն պայմանագիրը կարող է դատարանով վաղաժամկետ լուծվել, եթե՝

7.2.1. ՎԱՐՁԱԿԱԼԻՆ հանձնված Գույքն ունի դրա օգտագործմանը խոչընդոտող թերություններ,որոնց մասին ՎԱՐՁԱՏՈՒՆ չի նշել պայմանագիրը կնքելիս, որոնք նախապես հայտնի չեն եղել ՎԱՐՁԱԿԱԼԻՆ և վերջինը չպետք է հայտնաբերեր պայմանագիրը կնքելիս, Գույքը զննելիս կամ դրա սարքինությունը ստուգելիս:

7.2.2.Հանգամանքների բերումով,որոնց համար ՎԱՐՁԱԿԱԼԸ պատասխանատու չէ, Գույքը դարձել է օգտագործման համար ոչ պիտանի:

## 8..ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով:Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է համապատասխան դատարանի քննությանը:

## 9.ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1.Սույն պայմանագրում կատարված փոփոխությունները և լրացումները օրինական են միայն այն դեպքում, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից և վավերացված են նոտարական կարգով:

Սույն պայմանագրին կից հավելվածները դրա անբաժանելի մասն են:

9.2.Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով,4 (չորս) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, որոնցից առաջին օրինակը պահվում է Արմավիր նոտարական տարածքի գրասենյակում,

երկրորդ օրինակը պետք է ներկայացվի ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանում գրանցման 30 օրյա ժամկետում, իսկ մյուս օրինակները տրվում են կողմերին :

## ԿՈՂՄԵՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝

| ՎԱՐՁԱՏՈՒ | ՎԱՐՁԱԿԱԼ |
|---|---|
| «ՊՐՈԳՐԵՍ» ՍՊԸ | «ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ |
| Իրավաբանական հասցեն | Իրավաբանական հասցեն ք. Երևան |
| ՀՀ ք.Արմավիր, Սայաթ-Նովա 122 | Կառավարական տուն 3, |
| ՍՊԸ տնօրեն՝ | լիազորված անձ՝ |
| Կոլյա-Մանիշակի Գալստյան | Արտակ Հայկի Հովսեփյան |

Երկու հազար տասներեք թվականի դեկտեմբերի քսանյոթին

Սույն պայմանագիրը վավերացված է իմ Արմավիր նոտարական տարածքի նոտար՝ ՅՈՒՐԱ ԽԱՉԻԿԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՍ կողմից:Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Կողմերի ինքնությունը, գործունակությունը, իրավաբանական անձանց իրավունակությունը, նրանց ներկայացուցիչների լիազորությունները, անշարժ գույքի նկատմամբ իրավունքները ստուգված են:

ՀՀ քաղ. օր. 611 հոդվածի համաձայն, սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի պետական կադաստրի համապատասխան ստորաբաժանումում 30 օրյա ժամկետում:

Գրանցված է սեղանամատյանում՝ ----6014----------

Գանձված է պետական տուրք և ծառայության վճար համաձայն

« Պետական տուրքի մասին» և « Նոտարիատի մասին» ՀՀ օրենքների:

Նոտար Յու. Եղիազարյան Յու. Խ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ

---

Երկու հազար տասնհինգ թվականի ապրիլի տասնյոթին
Հայաստանի Հանրապետություն, քաղաք Արմավիր

«ՊՐՈԳՐԵՍ» Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերությունը, իրավաբանական հասցեն՝ քաղաք Արմավիր, Սայաթ-Նովա փողոց 122, ի դեմս ՍՊԸ տնօրեն՝ **Արմեն Կոլյայի Գալստյանի**, 16.12.2014թ. վավերացված լիազորագրով գործում է Հայաստանի Հանրապետության քաղաքացի **Ելենա Առաքելի Մանուկյանը**, անձնագիր AM0486428, տրված 25.10.2011թ. 048-ի կողմից, հասցե՝ քաղաք Արմավիր, Սայաթ-Նովա փողոց, 1 ա շենք, բնակարան 31/, այսուհետ՝ „ԿՈՂՄ-1„ և « ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ», իրավաբանական հասցեն՝ քաղաք Երևան, Կառավարական տուն 3, ի դեմս աշխատակազմի ղեկավար՝ Արմեն Կարապետյանի, 02.04.2015թ. վավերացված թիվ ԱԿ/07/3613-15 լիազորագրով գործում է Հայաստանի Հանրապետության քաղաքացի **Նարեկ Գևորգի Կարապետյանը**, անձնագիր AN0398283, տրված 06.03.2013թ. 048-ի կողմից, հասցե՝ Արմավիրի մարզ, գյուղ Ջանֆիդա, 12-րդ փողոց, տուն 26/, այսուհետ „ԿՈՂՄ-2„ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1.Կողմերի միջև կնքված 27.12.2013թ. թիվ 6014 գրանցամատյանով Արմավիր նոտարական տարածքի գրասենյակում վավերացված անշարժ գույքի՝ վարձակալության պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները .

3.1.Կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ

« 3.1.Վարձավճարի չափը կազմում է ամսեկան հարկերը ներառյալ 110 000 / մեկ հարյուր տասը հազար / ՀՀ դրամ և գործում է 2015 թվականի ապրիլի մեկից »:

5.1. Կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ

«5.1.Սույն պայմանագիրը կնքվում է մինչև երկու հազար տասնհինգ թվականի դեկտեմբերի երեսունմեկը » :

**2.**Պայմանագրի մյուս դրույթները թողնել անփոփոխ:

3.Սույն համաձայնագիրը ենթակա է գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանում 30 օրյա ժամկետում:

4. Սույն համաձայնագրի կնքման հետ կապված ծախսերը կատարված է Կողմ –2 -ի կողմից :

5. Սույն համաձայնագիրը կազմված և ստորագրված է չորս օրինակից, որոնցից առաջին օրինակը պահվում է Արմավիր նոտարական տարածքի գրասենյակում, երկրորդ օրինակը պետք է ներկայացվի ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Արմավիրի տարածքային ստորաբաժանում գրանցման, իսկ մյուս օրինակները տրվում են կողմերին:

| ԿՈՂՄ –1 | ԿՈՂՄ-2 |
|---|---|
| «ՊՐՈԳՐԵՍ» ՍՊԸ<br>իրավաբանական հասցեն քաղաք Արմավիր<br>Սայաթ-Նովա փողոց 122<br>Լիազորված անձ՝ | « ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ»<br>իրավաբանական հասցեն քաղաք Երևան,<br>Կառավարական տուն 3<br>Լիազորված անձ՝ |

Երկու հազար տասնհինգ թվականի ապրիլի տասնյոթին

Սույն համաձայնագիրը վավերացվել է իմ, Արմավիր նոտարական տարածքի նոտար՝ ՅՈՒՐԱ ԽԱՉԻԿԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՍ կողմից: Կողմերը համաձայնագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Կողմերի ինքնությունը, գործունակությունը, իրավաբանական անձանց իրավունակությունը և նրանց ներկայացուցչի լիազորությունները ստուգված են:

Գրանցված է սեղանամատյանում --1730---

Գանձված է պետական տուրք և ծառայության վճար համաձայն

« Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքների

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ

Երկու հազար տասնվեց թվականի փետրվարի քսանվեցին
Հայաստանի Հանրապետություն, քաղաք Արմավիր

«ՊՐՈԳՐԵՍ» Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերությունը, իրավաբանական հասցեն, քաղաք Արմավիր, Սայաթ-Նովա փողոց 122, ի դեմս ՍՊԸ տնօրեն՝ **Արմեն Կոլյայի Գալստյանի**, 16.12.2014թ.վավերացված լիազորագրով գործում է Հայաստանի Հանրապետության քաղաքացի **Ելենա Առաքելի Մանուկյանը**, անձնագիր AM0486428, տրված 25.10.2011թ. 048-ի կողմից, հասցե՝ քաղաք Արմավիր, Սայաթ-Նովա փողոց, 1 ա շենք, բնակարան 31/, այսուհետ՝ „ՎԱՐՁԱՏՈՒ „ և «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ», իրավաբանական հասցեն՝ քաղաք Երևան, Կառավարական տուն 3, ի դեմս աշխատակազմի ղեկավար՝ Արմեն Կարապետյանի, 05.02.2016թ. վավերացված թիվ ԱԿ/07/664-16 լիազորագրով գործում է Հայաստանի Հանրապետության քաղաքացի **Նարեկ Գևորգի Կարապետյանը**, անձնագիր AN0398283, տրված 06.03.2013թ. 048-ի կողմից, հասցե՝ Արմավիրի մարզ, գյուղ Ջանֆիդա, 12-րդ փողոց, տուն 26/, այսուհետ „ՎԱՐՁԱԿԱԼ „ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1.1.Սույն պայմանագրով Վարձատուն և Վարձակալը ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի դրույթներով / մասնավորապես 624 հոդվածի 2-րդ մասով/, հաշվի առնելով, որ պայմանագրով սահմանված ժամկետի ավարտից հետո Վարձատուի առարկությունների բացակայությամբ Վարձակալը շարունակում է օգտվել վարձակալված տարածքից, որոշեցին .

2.Կողմերի միջև 27.12.2013թ. թիվ 6014 գրանցամատյանով Արմավիր նոտարական տարածքի գրասենյակում վավերացված անշարժ գույքի՝ վարձակալության պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները .

ա/ Պայմանագրի 5.1.կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

« 5.1.Սույն պայմանագիրը կնքվում է մինչև երկու հազար տասնվեց թվականի դեկտեմբերի երեսունմեկը » :

3.Պայմանագրի մյուս դրույթները թողնել անփոփոխ:

4.Սույն համաձայնագիրը ենթակա է գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանում 30 օրյա ժամկետում:

5. Սույն համաձայնագրի կնքման հետ կապված ծախսերը կատարված է Վարձատուի կողմից :

6. Սույն համաձայնագիրը կազմված և ստորագրված է չորս օրինակից, որոնցից առաջին օրինակը պահվում է Արմավիր նոտարական տարածքի գրասենյակում, երկրորդ օրինակը պետք է ներկայացվի ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Արմավիրի տարածքային ստորաբաժանում գրանցման, իսկ մյուս օրինակները տրվում են կողմերին:

ՎԱՐՁԱՏՈՒ՝ «ՊՐՈԳՐԵՍ» ՍՊԸ , իրավաբանական հասցեն, քաղաք Արմավիր, Սայաթ-Նովա փողոց 122, լիազորված անձ՝ Ելենա Առաքելի Մանուկյան

Ելենա Առաքելի Մանուկյան

---

ՎԱՐՁԱԿԱԼ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ», իրավաբանական հասցեն՝ քաղաք Երևան, Կառավարական տուն 3, լիազորված անձ՝ **Նարեկ Գևորգի Կարապետյան**

---

Երկու հազար տասնվեց թվականի փետրվարի քսանվեցին

Սույն համաձայնագիրը վավերացվել է իմ, Արմավիր նոտարական տարածքի նոտար՝ ՅՈՒՐԱ ԽԱՉԻԿԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՍ կողմից: Կողմերը համաձայնագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Կողմերի ինքնությունը, գործունակությունը, իրավաբանական անձանց իրավունակությունը և նրանց ներկայացուցչի լիազորությունները ստուգված են:

Գրանցված է սեղանամատյանում ----351----

Գանձված է պետական տուրք և ծառայության վճար համաձայն « Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքների

**Նոտարական ակտի կոդ:** 578-20170201-117-930937
**Նոտարական ակտի գաղտնագիր:** P3WV8W

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ

երկու հազար տասնյոթ թվականի փետրվարի երեքին
Հայաստանի Հանրապետություն, քաղաք Արմավիր

**«ՊՐՈԳՐԵՍ»** Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, հասցե` քաղաք Արմավիր, Սայաթ-Նովա փ. 122, Գրանցման համար` 31.110.00669, ՀՎՀՀ` 04409154, ի դեմս` ՍՊԸ տնօրեն` **ԿՈԼՅԱ ԱՐԹՈՒՐԻ ԳԱԼՍՏՅԱՆԻ**, անձնագիր AK0262454 տրված 05.03.2009թ, 048-ի կողմից, ՀԾՀ 1709920270, հասցե ԱՐՄԱՎԻՐ ՇԱՀՈՒՄՅԱՆ Փ., այսուհետ` ,,ՎԱՐՁԱՏՈՒ,, և **«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ»** Պետական կառավարչական հիմնարկը, հասցե` Երևան, Կառավարական տուն 3, Գրանցման համար` 286.180.04820, ՀՎՀՀ` 02507171, ի դեմս` աշխատակազմի ղեկավար` **ԱՐՄԵՆ ՎԼԱԴԻԿԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ**, լիազորագրով հանդես է **ՆԱՐԵԿ ԳԵՎՈՐԳԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԸ**, ծնված` 20/09/1986թ., անձնագիր` AN0398283, տրված 048-ի կողմից, տրման ամսաթիվը` 06/03/2013, ՀԾՀ` 3009860064, հաշվառված` ԱՐՄԱՎԻՐ, ՋԱՆՖԻԴԱ, 12 Փ., 26 Տ, լիազորագիր թիվ Ա/Բ/07/367-17 , տրված 18.01.2017թ., այսուհետ ,,ՎԱՐՁԱԿԱԼ,, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1.1.Սույն պայմանագրով Վարձատուն և Վարձակալը ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի դրույթներով / մասնավորապես 624 հոդվածի 2-րդ մասով/, հաշվի առնելով, որ պայմանագրով սահմանված ժամկետի ավարտից հետո Վարձատուի առարկությունների բացակայությամբ Վարձակալը շարունակում է օգտվել վարձակալված տարածքից, որոշեցին .

2.Կողմերի միջև 27.12.2013թ. թիվ 6014 գրանցամատյանով Արմավիր նոտարական տարածքի գրասենյակում վավերացված անշարժ գույքի` վարձակալության պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները .

ա/ Պայմանագրի 5.1.կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

« 5.1.Սույն պայմանագիրը գործում է մինչև երկու հազար տասնյոթ թվականի ապրիլի մեկը » :

3.Պայմանագրի մյուս դրույթները թողնել անփոփոխ:

4.Սույն համաձայնագիրը ենթակա է գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի մարզերի միավորված ստորաբաժանում 30 օրյա ժամկետում:

5. Սույն համաձայնագրի կնքման հետ կապված ծախսերը կատարված է Վարձատուի կողմից :

6. Սույն համաձայնագիրը կազմված և ստորագրված է չորս օրինակից, որոնցից առաջին օրինակը պահվում է Արմավիր նոտարական տարածքի գրասենյակում, երկրորդ օրինակը պետք է ներկայացվի ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմիմարզերի միավորված ստորաբաժանում գրանցման, իսկ մյուս օրինակները տրվում են կողմերին:

**ՎԱՐՁԱՏՈՒ`**

-------------------------------------------------------------------------------

**ՎԱՐՁԱԿԱԼ`**

-------------------------------------------------------------------------------

երկու հազար տասնյոթ թվականի փետրվարի երեքին
Սույն համաձայնագիրը վավերացվել է իմ, Արմավիր նոտարական տարածքի նոտար` **ՅՈՒՐԱ ԽԱՉԻԿԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՍ** կողմից: Կողմերը համաձայնագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Կողմերի ինքնությունը, գործունակությունը, իրավաբանական անձանց իրավունակությունը և նրանց ներկայացուցչի լիազորությունները ստուգված են:

Գրանցված է գրանցամատյանում 463

Գանձված է պետական տուրք 2000 դրամ և ծառայության վճար 8000 դրամ համաձայն՝ «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Յուրա Խաչիկի Եղիազարյան